

ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԳ ՄԱՄՈՒԼԸ

Դարձեալ «Շարքի-Ռուսի» նոր ուղղութեան մասին.— Հայերն և Թիւրքիւն. համերաշխութեան և գործակցութեան կոչ թուրք ինտելիգենցիային.
— կրօնք և քաղաքակրթութիւն.— Լռութիւնը նշանաբան:

«Շարքի-Ռուսի» Բազու փոխադրուելու, և այդ առիթով թուրք լրագրի ուղղութեան մէջ տեղի ունեցող փոփոխութեան մասին անցեալ անգամ գրել էինք: Այժմ կարևոր ենք համարում մեր ընթերցողներին ներկայացնել Մէհմէդ աղա Շահ-թախթինսկիի մի յօդուածը, որը մեր աչքից վրիպել էր, և որը բաւական մեծ լոյս է սփռում նոյն հարցի վրայ:

«Շարքի-Ռուսի» ուղեգծի մէջ կատարուած փոփոխութիւնը մասնացոյց արել էինք Ահմէդ բէկ Աղայեվի ծրագիրը քննելով և մեկնելով: Մէհմէդ աղան իր վերոյիշեալ յօդուածի մէջ այդ փոփոխութեան էութիւնը պարզում է աւելի ընտրող մանրամասնութիւններով: Բանից դուրս է գալիս, որ Մէհմէդ աղան իրան ընկերակից դարձնելով Ահմէդ բէկին, ստիպւում է հրաժարուել ոչ միայն թուրք կանանց ազատագրութեան վերաբերեալ հարցեր յուզելուց, այլ և յանձն է առնում մի շարք ծրագրային կրճատումներ, զիջողութիւններ: Պէտք է ցաւով նկատել թէ այն՝ որից Շահթախթինսկին հրաժարւում է, կազմում էր իր լրագրի ուղղութեան ամենահամակրելի դժերից մէկը, տալիս էր «Շարքի-Ռուսի»-ն մի ազատամիտ, առաջադէմ, կուլտուրական օրգանի նկարագիրը: Այսպէս Շահթախթինսկին, եթէ մեր ընթերցողները յիշում են, երբեմն մերկացնում էր մահմեդական այլևայլ երկրների, մասնաւորապէս Թիւրքիայի վարչական թերութիւնները, ծաղրում, խայթում, հարուածում էր— թէպէտ և շատ չափաւոր կերպով— սուլթանական ռէժիմի այլանդակութիւններն ու հակամարդկային արարքները:

Երևում է որ Մէհմէդ աղան պէտք է մնաւ բարով ասէ և այդ կարգի քննադատութիւններին: Եւ այդ շատ, շատ ափսոս: Ա՛, գիտեմ որ այս ափսոսանքը պիտի վրդովէ՛ այժմ մեր մահմեդական հարեաններին: Նրանք այժմ պիտի բացադանչեն.

«Ա... հա՛, տեսէ՛ք, տեսէ՛ք, թէ ի՞նչպէս է դուրս ժայթքում հայկական ոխը, մաղձը. տեսէ՛ք, թէ հայերն ի՞նչպէս են խոստովանւում, որ թիւրք կառավարութեան դէմ ուղղուած քննադատութիւնները, նրանց հրճուեցնում, հովացնում են...» Այո՛, մեր իսլամ հարեանները պիտի բացազանչեն այս, և սրա նման ծամծմուած, յաճախ կրկնուած, սովորական յանկերդ դարձած ֆրազները: Բայց, ի դժբա՛տ: Եւ անա՛ թէ ինչո՞ւ Քանի որ առիթը ներկայացել է, խօսենք անկեղծօրէն, արտազին: Բազուի արիւնոտ դէպքերից յետոյ, գուցէ աւելորդ չէր լինի բաց անել մեր սիրտը մահմեդական ինտելիգենտների առաջ, և գոնէ մի բոլոր խօսել անկեղծութեան, ազնւութեան, արդարութեան անխարդախ լեզուով:

Մահմեդականները՝ կովկասում, Թիւրքիայում թէ այլուր, կարծում են, այնպէս են հաւատացած՝ թէ հայերը թշնամի են, ոխերիմ, արիւնախում թշնամի Թիւրքիային: Մահմեդականները այնպէս են համոզուած՝ թէ նա՛ սով կրում է հայ անուն, միայն մի իղձ, մի փափաք ունի—կործանուած, բնաջինջ եղած տեսնել Թիւրքիան, օսմանեան պետութիւնը: Եւ ինչո՞ւ համար: Որովհետեւ, իբր թէ, հայերը ձգտում են ինքնիշխանութեան, աշխատում են բաժանուել Թիւրքիայից, ձեռք բերել ազգային թագ ու դահ: Այս համոզմունքը, որ մեխի նման նստած է, կարծում ենք, համարեա ամենմահմեդականի ուղեղի մէջ, վերջերս, Բազում, Ամիրխանովի հրաւիրած խորհրդակցական նիստին երբ վիճում էին ողբերգական դէպքերի շարժառիթների մասին, յանկարծ արտայայտուեց արձակ, համարձակ, գրեթէ պաշտօնապէս, մի թուրք ձայնաւորի կողմից: Պ. Հաջիեւ յայտարարեց, թէ մահմեդականները չեն կարող հանդուրժել երբէք, որ հայերը որեւէ ձևով թշնամական դիրք բռնեն Թիւրքիայի հանդէպ: Ուրեմն, պարզ է, որ հայերը մեղադրւում են, նրանց վերագրում են անկախութեան, ինքնիշխանութեան ձգտումներ:

Լաւ ուրեմն: Եթէ Թիւրքերը երբ և իցէ հաւատացել են ազնիւ խօսքի գոյութեան, եթէ նրանք ընդունում են, որ կայ սրտից բղխած անկեղծ, անդիմադրելի ճիշդ, մենք մեր հոգով, մեր ամբողջ ուժով ճշում ենք, աղաղակում ենք, երդւում ենք, որ մեզ վերագրուած այդ ձգտումները անհիմն են, որ դա արդիւնք է մի մահացու Թիւրքիմացութեան, որ դարերով միեւնոյն հողի վրայ, միմեանց կողքին ապրող, միեւնոյն շահերով առաջնորդուող, միևնոյն բարուն և միեւնոյն չարին ենթարկուած, տառապանքի ինչպէս և հրճուանքի մէջ եղբայրացած երկու ազգերի կեանքն է թունաւորում:

Այո՛, այս ամենը բարձրաձայն հաստատում ենք:

Սակայն մենք միթէ սիրում ենք Թիւրքիան: Մենք նոյնքան համարձակ յայտարարում ենք, որ, *հ.՝* մենք ատում ենք այն ընծիմը, որ ծանրանում է անխտիր ամբողջ երկրի վրայ, և որը աղբիւր է միմիայն չարիքի ու դժբաղդութեան: Մահ-մեղական ինտելիգէնտներ, ըստ էք, մենք ատում ենք այն, ինչ որ ատել ենք ու պիտի ատենք ամեն տեղ, ամեն, երկրի վրայ ու ամեն երկնքի տակ—բռնութիւնը, հարստահարութիւնը:

Եւ դժբ, Թիւրք ընկերներ, Թիւրք ինտելիգէնտներ, եթէ ձեր մէջ կայ բանականութիւն, խիղճ, եթէ ձեզ համար մարդկային անհատի իրաւունքները նուիրական են, թի՛նչ գոյնի և ինչ ցեղի էլ որ պատկանի նա—դուք ինքներդ մեզ պիտի ասէք—բռնավճ: Դուք ինքներդ ձեր ձեռքը պիտի դնէք մերինի մէջ, մի քիչ արդարութիւն, մի քիչ գութ, մի քիչ խաղաղութիւն մտցնելու համար այդ դժբաղդութեան ու սուզի աշխարհում: Եւ այդ անելով դուք *հ.՝* միայն մեզ համար աշխատած պիտի լինէք, այլ և ձեզ համար, ձեր այն եղբայրների համար, որոնք նոյն դաժնութեան արցունքն են լաց լինում, նոյն ահաւոր ցաւի տակ են կռացած: Բայց միթէ դուք հաւատացած էք, որ բռնութեան մէջ է մի ազգի, մի իշխանութեան, մի պետութեան կեանքի, գոյութեան գաղտնիքը: Միթէ սուրն ու բանտն է, որ մի երկիր դրախտի է փոխում: Այդ նոյն ոէ՜ժիմի շնորհիւ չէ՞, որ Թիւրքիան հասաւ այս դրութեան:

Ահա թէ ինչո՞ւ համար է մեր ափոսանքը: Թուրք մամուլը, գոնէ ազատ մամուլը, պէտք է անդադար յիշեցնէ Վոսիորի ափերում իշխող կառավարութեան իր նուիրական պարտականութիւնը—մարդկային լինել անխտիր իր բոլոր հպատակներին վերաբերմամբ: Առանց դրան՝ Թիւրքիան կը դիմէ միմիայն իր կործանման: Եթէ հայը կու տայ իր արցունքը, —արարը, մահեղոնացին, ալբանացին կը կանգնի՝ ահաւոր ու սպառնալից, իր հարստահարչի դէմ: Այդպէս չեղան և անցեալում: Միթէ, երբ հայերը անմոռնչ տանում էին իրանց ծանր լուծը, այդ միևնոյն Թիւրքիան իր յայտնի ոէ՜ժիմով իր ձեռքից չհանեց Յոնաստանը, Սերբիան, Բուլղարիան, վերջապէս ամբողջ եւրոպական Թիւրքիան: Ուրեմն, Թիւրքիան սպանող ցաւը հայերը չեն, այլ այն ներքին զարհուրելի վէրքերը, որ կըծում են նւրան և, եթէ այսպէս շարունակուի, յամբար պիտի իջեցնեն գերեզման: Ամեն մահմեդականի, գիտակից, ազնիւ մահմեդականի անյետաձգելի պարտականութիւնն է աշխատել այդ վէրքերի մերկացման և բուժման: Բռնութեան երկրում, ձեր եղ-

բայրակիցները անկարող են այդ պարտքը կատարելու: Գոնէ գութ մի դաւաճանէք ձեր կոչման:

Այս է ամեն ինտելիգէնտ հայի համոզումը. այս թող լինի և՛ ձերը, որպէսզի գոնէ մենք՝ երկու ցեղերի ինքնաճանաչ ներկայացուցիչներս՝ հաղորդուենք միեւնոյն իդէալով և ձեռք ձեռքի տուած՝ գործենք արդարութեան, ճշմարտութեան դառն, բայց փրկարար ճամբու մէջ...

*
* *

Դիմենք սակայն փաստերին: Մէհմէդ աղա Շահթախ-թինսկի՝ իր յիշեալ յօդուածում, նախ հարկաւոր յարգանքը մատուցանելուց յետոյ Ահմէդ բէկ Աղայեվին, գրում է.

«... «Շարքի-Ռուս»-ն այսպէս, փոխանակ մի տնօրէն ունենալու, երկուսը պիտի ունենայ: Այս առիթով անհրաժեշտ ենք համարում այսուհետեւ մեր լրագրի հետեւիք ուղղութեան գլխաւորը կէտերը յիշել:

«Մեր լրագրի հիմնարկութեան և յարատեւութեան նպատակն է ծառայել մեր մահմեդական եղբայրների նիւթական և բարոյական շահերին:

«Ամբողջ մահմեդականները մի դաւանելով՝ նրանց մէջտեղ գոյութիւն ունեցող կրօնական տարբերութիւնը չեղեալ պիտի նկատենք: Ինչ դէպքում էլ լինի, այսուհետեւ մեր լրագրում ոչ մի անգամ չպիտի գործածենք ուրանի և շիա բառերը:

«Եւրոպացիների մէջ շատ տարածուած է իրանց վարքն ու բարքը քննադատութեան բովից անցկացնելու սովորութիւնը, և եթէ մարդկային խելքն ու ընդթիւնը թոյլ տան՝ նրանց փոխելու: Եւրոպացիների այդ աշխարհայեացքից, թէ չգիտենք ուրիշ շարժառիթից դըդուած՝ մենք էլ սկսեցինք անցեալներում մեր լրագրում խօսել մեր մահմեդականների մի քանի սովորութիւնների մասին: Մեր մահմեդական հասարակութիւնը, երևում է, որ այս տեսակ հարցերի ուսումնասիրութիւնից չի արտոժում: Դրա համար, ընդհանրապէս վարք ու բարքի, և մասնաւորապէս թուրք կանանց բաց երեսով ման գալու վերաբերեալ հարցեր չպիտի յուզենք մեր լրագրում:

«Դրացի մահմեդական երկրների զրութեան մասին այսուհետեւ վճռապէս կը հրաժարուենք քննադատութիւններ և դատողութիւններ ներկայացնելուց. դէպքերի, իրողութիւնների մասին կարող ենք խօսել միայն պատմութեան մէջ:

«Մինչև ուսական նոր տարուայ վերջը, մեր մշտական, կարող գրչի ընկերների թիւը պիտի աւելացնենք. իսկ չպիտի տը-

պենք յօդուածները մեր այն թղթակիցներին, որոնք իրանց միտքը արտայայտելու բաւականաչափ կարողութիւն չունին»:

Մէհմէդ աղայի ներկայացրած այս նոր ուղեգծի առաջին կէտը կարող է միայն ուրախութիւն պատճառել: Իհարկէ պէտք է մոռանալ կրօնական խտրութիւնները. կրօնական խտրութիւնները՝ որ գոյութիւն ունին, ոչ միայն մի ազգի զանազան հատուածներէ, այլև բոլոր ազգերի մէջ: Այլևս անդարձ կերպով անցել են այն ժամանակները, երբ ազգերը, ժողովուրդները մոլեռանդութիւնից կուրացած՝ միմեանց արիննի մէջ էին մարում իրանց միստիք ու բռնաւոր հոգու կատաղութիւնը: Այժմ լուսաւորուած՝ մարդկութիւնը ոչ մահմեդական է ճանաչում, ոչ քրիստոնեայ, ոչ բուդդայական—այլ միայն մարդ, մարդ՝ որի բաղդաւորութեան համար պէտք է զոհել ամեն նախապաշարմունք, որի եղբայրութեան համար պէտք է քանդել ամեն պատնէշ, որ ստեղծել են, դիտմամբ, ուժեղներն ու խորամանկները, իրանց տիրապետութիւնը, իրանց շահագործումը ապահով հիմքերի վրայ դնելու և յաւէրժացնելու նպատակով: Ահա ի՞նչու համար մենք սրտանց ողջունում ենք «Շարքի-Ռուսի» այդ քայլը, իբրև առաջադիմութեան մի քայլ, և յոյս ունենք որ մեր մահմեդական հարևանները կրօնական ներողամտութիւնը կը մղեն ոչ միայն մինչև շիաութեան և սիւնիութեան սահմանները, այլ և շատ աւելի դէնը:

Ուղեգծի երկրորդ կէտի մասին՝ մենք յայտնել ենք արդէն մեր կարծիքը անցեալ համարում. դա սխալ է, մոլորութիւն: Թուրք հասարակութեան վերածնումը մի երազ կը դառնայ, եթէ այդ հասարակութեան հիմքը, թուրք կինը՝ չբարձրանայ իր ստրուկ դրութիւնից, եթէ թրքուհին էլ չվայելէ, իբրև մարդ՝ իր տարրական ու անբռնաբարելի իրաւունքները:

Իսկ ինչ վերաբերում է երրորդ կէտին, մահմեդական երկրներէ բննադատութեան հարցին, «Շարքի-Ռուս»-ի նահանջումը մի ցաւալի թիւրիմացութիւն է, որի մասին խօսեցինք վերևում:

Գալով չորրորդ կէտին, մայրենի լեզուով իրանց միտքն արտայայտելու բաւականաչափ կարողութիւն չունեցող թղթակիցների գրութիւնը չհրատարակելու հարցին—դա էլ մի գովելի սկզբունք է, որին «Շարքի-Ռուս» պէտք է հետևած լինէր իր առաջին քայլից: Լրագիրը, պարբերական հրատարակութիւնը՝ ուսումնարանից յետոյ ամենազօրեղ գործօններից մէկն է մայրենի լեզուի տարածման: Մի լրագրի ստիպողական պարտականութիւնն է իր էջերում զետեղել միմիայն այն գրութիւնները, որոնք չեն մեղանչում լեզուի կանոնների դէմ:

Կովկասաբնակ մահմեդականները լեզուն դժբախտաբար այն-
քան էլ կանոնաւոր, կոկ, կազմուած չէ: «Շարքի-Ռուս»-ը հե-
տեւելով լեզուի միօրինակութեան՝ կարող է Կովկասի մահմեդա-
կանները համար անել այն, ինչ որ արել են Կ. Պոլսի թիւրք
լրագիրները օսմանցիները համար—ստեղծել մի գրական ընդ-
հանուր լեզու:

*
*
*

Թուրք հասարակութեան առաջադիմութիւնը կախումն
ունի միմիայն ճշմարիտ ու անկեղծ հրապարակաստութիւնից:
Մէմէդ աղա Շահթախթիհսկին՝ եթէ ոչ միշտ, գոնէ երբեմն-
երբեմն հնչեցնում էր այդ վերանորոգող հրապարակաստու-
թեան ձայնը: Այսպէս՝ «կրօնքի և քաղաքակրթութեան» մասին
գրուած մի յօդուածի մէջ («Շարքի-Ռուս» № 85) Թուրք խմբ-
ւագիրը բացատրում է մահմեդականներին, թէ որքան տար-
բեր բաներ են այդ երկու մտքերը, թէ որքան մեծ տգիտու-
թիւն է այդ երկու գաղափարները միմեանց հետ շփոթել. կը-
րօնքը աւելի սրտի, խղճի հարց է, քան խելքի ու դատողու-
թեան: Նա խօսում է Աստուծոյ, յաւիտեանականութեան, արքա-
յութեան, կարճ՝ գերեզմանային կեանքի մասին, իսկ քաղաքա-
կրթութիւնը՝ ընդհակառակը, երկրային կեանքի մասին, թէ
լինչպէս մարդիկ կարող են բարեւոյց իրանց դրութիւնը, ապա-
հովել իրանց գոյութիւնը: Ուրեմն, ամեն մարդ, ամեն ազգ՝
կրօնքից բոլորովին անկախ եղող քաղաքակրթութիւնից պէտք
է օգտուի, որքան կարելի է: Եւ մի մահմեդականութիւնս ինչ
արգելք կարող է լինել, որ ես իմ տունս կառուցանել տամ
Ֆրանսիական ճարտարապետութեան օրէնքների համեմատ,
որ ուռնիների շինած երկաթուղով ճամբորդեմ, և կամ ուռնա-
կան «բորշը» թուրքական «բող-բաշից» գերադասեմ,» ասում
է Թուրք հրապարակագիրը:

«Ո՛չ միայն նիւթական, այլ և բարոյական հարցերում էլ
մահմեդականները (նախկին) ոչ-իսլամ ժողովուրդների քաղա-
քակրթութիւնից չեն խոյս տուել: Միթէ՛ արաբները չեն, որ
չին Յունաստանի փիլիսոփաները թարգմանել և մեկնաբանել
են: Եւրոպացիները յունական իմաստասիրութեան ծանօթացել
են նախ արաբական թարգմանութիւնների շնորհիւ և ապա, դա-
րեր յետոյ միայն դիմել են յոյն, հելլենական լեզուին:

«Հարուն -էլ-Ռաշիդը մի յոյն կայսրից խնդրեց, որ մի
փիլիսոփայ ուղարկէ Բաղդատ իմաստասիրութիւն դասա-
խօսելու համար: Յոյն կայսրը մերժեց: Այն ժամանակ արաբ
խալիֆէն հրամայեց որ բանակ պատրաստեն, որպէս զի գնաց
յարձակուի յոյն կայսեր վրայ և նրան խելքի բերէ:

«Մեր նախնիքը իրանց արիւնը թափեցին, որպէս զի իրանց կրօնքից դուրս եղողները մտքերը սովորին: Իսկ մենք՝ մեր ծուլութիւնը, անպիտանութիւնը նուիրական քօղերի տակ պարտկած, ծածկած՝ օտարազգիքից խրտնոււմ ենք:»

* *

«Շարքի-Ռուսի» խմբագրութեան մէջ ուսումը Կ. Պոլսում ստացած և նոյնտեղացի մի աշխատակից կայ, Ֆայիզ Նոման-զատէ, որի մի երկու յօդուածի մասին առիթ ունեցել ենք խօսելու այս էջերում: Արդ, այդ պարոնը՝ «Շարքի-Ռուսի» այս տարուայ 16-րդ համարում տպել է մի յօդուած, որը ցոյց է տալիս, թէ մահադականները որ աստիճան զգածոււմ են օսմանեան կառավարութեան դէմ ուղղուած քննադատութիւններից: «Շարքի-Ռուս»-ում երևացել էին Թիւրքիայի մասին մի քանի յօդուածներ՝ «Ղազէթնէվիս» ստորագրութեամբ: Այդ յօդուածները թոււմ է, թէ մեծ վրդովմունք առաջացրել են Կովկասի իսլամների մէջ: Վերոյիշեալ Նոման-զատէն յայտնում է, որ այդ առիթով թէ գրաւոր և թէ բերանացի զանգատներ ստացել է այլևայլ կողմերից և շտապում է յայտարարելու, որ ինքը չէ այդ յօդուածների հեղինակը. «Ես, գրում է Նոման զատէն, ճիշտ է շատ լաւ ծանօթ եմ թիւրքական գործերին, պալատական գաղտնիքներին, բայց այդ բոլորը—նկատի ունենալով կացութիւնն ու տեղը—իմ սրտումս եմ պահել: Ես չեմ ուզեցել Բագուի մեր ուսուցիչներից Ջէմալէդդին եղբօր ընթացքին հետեւել, որը Պոլսում մի գործ չկարողանալ ճարելու պատճառով, այնտեղ տեսած բոլորովին մասնաւոր ու չնչին դէպքերը, սրանից քիչ առաջ ընդարձակօրէն պատմեց «Շարքի-Ռուսի» էջերում և փոխանակ յօնք շինելու, աչք հանեց:»

Ու պարոնը յայտնում է, որ չպէտք է Թիւրքիայի հանգիստ մարսողութիւնը խանգարել: «Այստեղ, Կովկասում, մահմեդականները բարենորոգման կարօտ հազար գործեր ունեն. մեզ շրջապատող սարսափելի ամպերը, մեզ կաշկանդող անգիտակցութեան կապերը, մեր վիզն անցած տգիտութեան շղթաները, մեր ազգային գոյութիւնը չորացրնող, նոյնիսկ մեր հիմքը փորել ջանացող ամեն տեսակ... արգելքները՝ չորս ձեռքով, մեր բոլոր ուժով ոչնչացնելու փոխարէն, ի՞նչ հարկ կայ օսմանցիների, պարսիկների մի քանի մասնաւոր, մեզ անփնաս թերութիւնները հրապարակելու:»

Ուրեմն, ամբողջ չգայթակղեցնելու, զգայուն սրտերը չվերաւորելու, տգէտ ու անհեռատես նախապաշարմունքներն ու բնազդները փայփայելու համար պէտք է լռել: Այսպէս են դատում մեր մահմեդական հարևանները...

Տիգրան